

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԸ ՍՓՅՈՒՌՔԱՅԱ
ԹԵՐԹԵՐԻ ՔՆԱՐԿՈՒՄԵՐՈՒՄ (1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.)*

Խաչատուր Ստեփանյան

Բանալի բառեր՝ Հայաստան, խորհրդայնացում, սկիուռք, Հայիեղկոմ, ազգային կուսակցություններ:

1920թ. նոյեմբերի 29-ին Հայիեղկոմը, Հայաստանի հյուսիս-արևելքից մտմելով Իջևան, հանդես եկավ Հայաստանը խորհրդային հրչակելու մասին հայտարարությամբ [1]:

1920թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով Հայաստանում իշխանությունը դաշնակցությունից փոխանցվեց բոլշևիկներին: Նոր իշխանությունների անդրամիկ հրամանով դեկտեմբերի 2-ը ազդարարվում էր Հայաստանում խորհրդային իշխանության հրչակման օր [2]: Հրամանը հրապարակվում է ՀՍԽՀ դեկրետների և հրամանների պաշտոնական ժողովածուի մեջ [3], սակայն հետազոտում համապնդ է այնտեղից [4]: Դեկտեմբերի 2-ի իշխանության խաղաղ փոխանցումը արժեգրկելու և, հեղափոխական ճանապարհով Հայաստանում իշխանությունը վերցնելու բոլշևիկյան տեսությունը հիմնավորելու նպատակով 1921թ. նոյեմբերի 29-ին խորհրդային Հայաստանի ժողովությունը բոլոր դեկրետներում և հրամաններում Հայաստանում խորհրդային իշխանության հայտարարման օրը դեկտեմբերի 2-ի փոխարեն ընդունել նոյեմբերի 29-ը [5]: Ըստ էության, Հայաստանի խորհրդային իշխանություններն այս քայլով փորձում էին քողարկել Հայաստանի խաղաղ խորհրդայնացման իրողությունը և խօսել կապն անցյալի իրականության հետ [6]:

Հայաստանի խորհրդայնացման օրը տարբեր կերպ է ընկալվել և մեկնաբանվել սկիուռքահայ թերթերի կողմից: Իրականում քննարկումների հիմքում ավելի շատ ընկած էր այս կամ այն քաղաքական ուժին համակրելու կամ մերժելու հարցը և ոչ պատմական իրողությունների վերլուծությունը: Այս համատեքստում երթեմն էլ քննարկումների տիրուպում է եղել Հայաստանի անկախ լինել-չլինելու խնդիրը:

Դաշնակցական թերթերը զարույցով էին անդրադառնում բոլշևիկների կողմից նոյեմբերի 29-ը Հայաստանի խորհրդայնացման օր նշելու փաստին: Այս կապակցությամբ Փարիզի «Հարաց»-ը գրում է. «Երեւանի վարիչները կը յանառին նոյեմբեր 29-էն հաշուել թուական մը, որ իրականին մէջ կը սկսի դեկտեմբերի 2էն»[7]:

Հայաստանի խորհրդայնացման թվականը նոյեմբերի 29-ին նշողներին, առավել ևս այդ օրով Հայաստանի «Վերածնունդը» պայմանավորողներին խիստ հակադարձում է նաև Ֆրեզնոյի «Ասպարեզ»-ը: «Մեր մէջ խմբակ մը գոյութիւն ունի,- գրում է թերթը, - տարուած հիւանդրու եւ ամիրագործելի «համաշխարհային եղավոխութեան» գաղափարով, որ ամէն կերպ կը ջանայ արհեստական փոփոխութեան ենթարկել անկախութեան թուականը եւ զայն փոխարել նոյեմբեր 29-ին, երբ ռուսական եւ տաճկական սովորներու օժանդակութեամբ հայ բոլշևիկները տիրեցին մեր երկրին եւ «արոյետարական» իշխանութիւն հաստատեցին Հայաստանի մէջ»: Թերթը գտնում է, որ վարչաձկի փոփոխության պատճառով չպետք է կամայական փոփոխության ենթարկել նաև անկախության թվականը՝ մայիս 28-ը [8]: Անդրադառնալով մայիսի 28-ը «ան-

* Հոդվածն ընդունվել է 15.02.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՍՀ պատմության ամբիոնը:

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

դարտ» պահելու խնդրին՝ Կահիրեի «Հուսաբեր»-ը գրում է. «Մայիս 28-ը կենսանորոգ թուական մըն է հայոց ազգին համար եւ աստով իսկ, յաւրժական ու կործանարար մղձաւանց մը՝ անոր ամէն կարգի թշնամիներուն ներքին թէ արտաքին, կանաչ թէ կարմիր: Պահենք մայիս 28-ը և գուրգուրանք անոր վրայ, որովհետեւ ան է որ պիտի մահէ մեզ վաղուան ազատ ու ամկախ Հայաստանին համար» [9]:

Այսպիսով՝ Սկզբունքում հրատարակվող դաշնակցական թերթերը գտնում էին, որ որևէ իմաստ չկա Հայաստանի խորհրդայնացման օրը դեկտեմբերի 2-ից տեղափոխիւն նոյեմբերի 29-ը: Առավել անիմաստ է դառնում Հայաստանի անկախության թվականի փոփոխությունը՝ մայիսի 28-ից թերեկով նոյեմբերի 29-ը: Մեր կարծիքով՝ դաշնակցական թերթերն այս կերպ ոչ միայն պաշտպանում էին իրենց կուսակցության պաշտոնական տեսակետը, այլև ներկայացնում էին պատմական իրականությունը՝ թերևս ինչ-որ տեղ արդարացված ձևով արժնորելով նաև ՀՅԴ դերը:

Խնդրին երկակի մոտեցում էին ցուցաբերում հնչալյան թերթերը:

Օրինակ՝ Բեյրութի «Արարատ» թերթը, անդրադարնալով Հալեպում խորհրդային Հայաստանի տարեդարձը նշելու հանդիսությանը, մեջբերում է այդ հանդիսության նախակահողի խոսքերը. «Նոյեմբեր 29-ը տօնն է իրական անկախութիւնը վայելող խորհրդային Հայաստանի:... Նոյեմբեր 29ը յարութեան տօնն է 600 տարիներէ ի վեր ստրկութեան մէջ սուույսող հայ ազգին» [10]: Ըստ էության, թերթը առաջնահերթությունը տալիս է խորհրդային մոտեցմանը:

Հնչալյան մեկ այլ՝ «Արծագանք Փարիզի» պարբերականը բոլորովին հակառակ տեսակետն է հայտնել: Թերթը գտնում է, որ «մայիսի 28-ը, իբրեւ մեծ ու նուիրական ուխտի օր պէտք է տօնուի բովանդակ հայութեան կողմէ, առանց կուսակցական խորութեան, վասմզի մեր Վերածննդի այդ խնկելի օրը դարբնողը եղած է ինքը՝ Հայ ժողովուրդը եւ ոչ թէ այս կամ այն կուսակցութիւնը միայն... Մայիս 28-ը յաղթանակի օրն է նաեւ Հայ յեղափոխութեան պայքարին, որուն իրականացման համար պայքարած եւ գոհաբերած են բոլոր կուսակցութիւնները» [11]: Ավելին՝ Հնչալյանմերի փարիզյան պաշտոնաթերթը ընկնում է հակառակ ծայրահեղության մեջ՝ նոյեմբերի 29-ը համարելով Հայաստանի ստրկացման օր: «Հայաստանի խորհրդայնացման տարեդարձը կրնայ խանդավառէլ քանի մը հարիւր կամ հազար հայ կոմունիստներ ամբողջ աշխարհի հայութեան մէջ, բայց Մայիս 28ը նուիրական տօն է ամբողջ պայքարող հայութեան համար, որ ազատ պետական գաղափարով կ'ոգեւորուի: Ամէն նոյ. 29ի երբ ամէն տեղ հայ Պոլշենիկները յավակնութիւնը ունենան ազգային տօնակատարութեան մը, հայ ժողովուրդը միմիայն անտարբերութեամբ պիտի դիմաւորէ, ինչպէս երեկ էր: Ու միշտ պիտի աղաղակէ թէ մեր ստրկութեան տարեդարձն է, որ կը տօնուի», - գրում է թերթը [12]:

Խորհրդայնացման փաստը դրական ընդունելուն գուգահեր՝ մայիսի 28-ի իրողությունը կարևորում էր նաև հնչալյան մեկ այլ պարբերական՝ Հալեպի «Սուրիհական մամուլ»-ը: «Մայիս 28-ը Հայաստանի վերածննդի տօնն է: Ու այդ տօնը մենք կը տօնենք դարեր շարունակ, երբ հայր կապրի ու կապրեցնէ իրեն հետ նաեւ Հայաստանը: Յարգելով վաղուան օրը (մայիսի 28-ը – Խ. Ս.), անգամ մը եւս անդրադարնանք մեր տիխուր անցեալին եւ պատմութեան սուլալի դասերէն խրատուած ու գօտեպնուուած, ուխտենք որ երկար եւ անփոփոխ պահենք Մայիս 28-ին սկսող եւ Նոյեմբեր 29-ին որոշ կերպարանք ստացող մերկայ դարաշրջանը», գրում է թերթը [13]: Հնչալյանմերի Հալեպի պաշտոնաթերթը անդրադարձել է նոյնիսկ հեռավոր Բուենոս Այրեսում Հայաստանի խորհրդայնացման տարեդարձը նշելու հանդիսությանը: Հատկանշական է հնչալյանմերի կողմից Հայաստանի խորհրդայնացունը դեկտեմբերի 2-ին հիշատակե-

ՄԵՄՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

լը՝ նշելով, որ այդ օրը «հայկական հեղափոխության» օրն է [14]:

«Սուրիական մամուլե-ն առիթն օգտագործում է նաև դրական արտահայտվելու խորհրդային Հայաստանի հանդեպ. «Խորհրդային Հայաստանը դրական ու բեղմնաւոր ամբողջացումն է հայ քառասնամեայ յեղափոխութեան: Անոր յաղթանակը՝ յաղթանակն է հայ իրապաշտութեան: Հայ կեանքի դառն անհրաժեշտութիններու հարագատ զաւակն է ան» [15]:

Նոյն ոճով է գրում նաև Կ. Պոլսի հնչակյան «Երկիր»-ը. «Հայ աշխատաւորութիւնը գօրացած կովկասեան եւ ռուսական յեղափոխական ռամկավարութեան բարեկամութեամբը՝ Մայիս 28-ի տարեդարձին առիթով մի անգամ եւս ուժին կը հնչեցնէ իր ծայնը՝ յանուն միակն Հայաստանի, քօմինիստական իրաւակարգով եւ պրոլետարիատի տիբրաթուրայով» [16]:

Հայաստանի խորհրդայնացման օրվա, Խորհրդային Հայաստանի անկախության խնդրի վերաբերյալ ուրույն տեսակետ է հայտնում հնչակյանների աներիկյան պաշտոնաթերթ «Երիտասարդ Հայաստանը»: Թերթի իմբագիր Ստելիան Սապահ-Գույզանը 1920թ. դեկտեմբերին գրում է, որ Հայաստանի խորհրդայնացումով նրա անկախությունն ու պետականությունը չի վերացել: Նման խոսքերը, ըստ թերթի, եղբէք չեն համապատասխանում իրականութեան: Որովհետեւ հայկական պետականութիւն կայ, նա անկախ է եւ բնաւ չի կազմում մասը ռուսական պետութեաննե [17]: Ավելին, 1921թ. մայիսի 27-ին, առաջին հանրապետության անկախությանը նվիրված իմբագրականում թերթը Խորհրդային Հայաստանը համարում է առաջին հանրապետության շարունակությունը. «Հայ քանուրութեան ու գիւղացիութեան երազած ազատութեան աղօս շողերու երերման երրորդ տարեկիցն է վաղը, որ այդ Ազատութեան իրական նշանակութիւնը լաւագէս ըմբռնող մոտքերը հոգեկան ամսարան ցնծութեամբ պիտի տոնեն զայն»: Հատկանշական է, որ «Երիտասարդ Հայաստան»-ի համոզմանը «Սովիետական Հայաստանի իշխանութիւնը... իր թեւերը պիտի տարածէ եւ թրքահայաստանի եւ ամբողջ աշխարհի վրայ» [18]:

Թերթի 1925թ. նոյեմբերի 28-ի իմբագրականում մասնավորապես նշվում է. «Սօցիալիստ Խորհրդային Հայաստանի սահմաններուն մէջ ապրող աշխատաւորութիւնը, գեղջուկն ու գեղջկուիին՝ Նոյեմբեր 7-ի տօնախմբական անօրինակ խանդավառութիւններէն վերջ, կը պատրաստուի ողջունել Դեկտեմբերի 2-ը (ընդգծումը մերն է – Խ. Ս.)՝ իր յաղթանակներուն 5-րդ տարեդարձը, որու հանդիպ ամստարբեր չէ եւ չի կարող զլալ արտասահմանեան գաղութահայ աշխատաւորական զանգուածը մասնաւորաբար... Դեկտ. 2-ը նոր փառայեղ շրջան մը բացած է հայ աշխատաւորութեան արջեն» [19]:

Կարելի է եզրակացնել, որ հնչակյան պարբերականները, չհակադրվելով խորհրդային վարչակարգին, այնուամենայնիվ արժանորում էին մայիսի 28-ի դերը հայ ժողովրդի կյանքում, չնայած որ խորհրդային վարչակարգն ամեն զնով մերժում էր այդ տարեթիվը: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի խորհրդայնացման օրվան, ապա այս առումով տարբեր թերթեր տարբեր մոտեցում են ցուցաբերում՝ կամ նոյեմբերի 29, կամ դեկտեմբերի 2:

Նոյեմբերի 29-ը Հայաստանի խորհրդայնացման, արավել ևս վերածննդի օր են համարում ռամկավար-ազատական թերթերը: Բռնտոնի «Պայքար» պաշտոնաթերթում ականավոր գործիչ Արշակ Չոպանյանն իր հրապարակումներից մեկում գրում է. «Մայիս 28-ը հայ ազատագրութեան համար մղուած դարաւոր պայքարին գեղեցիկ թուականներէն մին է... Ան անցեալին կը պատկանի: 1919 (պետք է լինի 1920 – Խ. Ս.) Նոյ. 29էն ի վեր Հայոց պատմութեան մէկ նոր շրջանը կը բացուի, այդ օրը հայ ազգային ինքնավար կենաքին մէկ նոր փուլը կը սկսի, այ օրը կը ստեղծուի Խորհրդային Հայաստանը, որ այժմեան կենդանի Հայաստանն է...» [20]: Նոյն հրապարականության մեջ Ա. Չո-

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

պանյանը, նախընտրելով նոյեմբերի 29-ը, փորձում է ցույց տալ, որ իր համար խորհրդային Հայաստանը գերադասելի է «Դաշնակցական Հայաստանէն» [21]:

«Պայքար»-ի խմբագրականներից մեկում Հայաստանում «խաղաղութեան, ապահովութեան ու վերաշինութեան թեղմնաւոր շրջանի» սկիզբ է համարվում 1920թ. նոյեմբերի 29-ը: Ըստ թերթի՝ այդ օրը «Ազատ Հայաստանի գոյութիւնը դրուեցաւ շիտակ ու ամուր իմներու վրայ» [22]: Ինչպես տեսմում ենք, ռամկավար պաշտոնաթերթը, կարևորելով Հայաստանի խորհրդայնացումը երկրի գարգացման առումով, այդ իրադարձության սկիզբ համարում է նոյեմբերի 29-ը:

Թերթը նման բովանդակությամբ խմբագրական հոդվածներ է հրապարակում նաև հետագա տարիների նոյեմբերի 29-ի համարներում: «Նոյմ. 29-ը Խորհրդային Հայաստանի տարեդարձն է, եւ Հայ ազգային պատմութեան մէջ արձանագրուած է՝ իրեւ Փրկութեան թուականը, քանզի ութը տարի առաջ այդ օրը Հայ ժողովուրդն ու Հայաստան ազատուեցան քաղաքական աղէտալի նախարենկութեան մը՝ Խորհրդային իշխանութեան հաստատութեամբ եւ իրեւ ազատ ազգ ու պետութիւն ապրելու իրաւունք ստացան» [23]: «Ոմանց տեսութեամբ, Նոյ 29ը Հայաստանի մէջ պետական դրութեան փոկիդիութեան թուական մըն է, անկախութեան տարեդարձ չէ: Նոյ 29ը՝ Հայաստանի մէջ Խորհրդային իշխանութեան հաստատութիւնը սակայն, անկախութեան յայտարարութեան աւելի մեծարժէք քան մըն է: Այդ օրը թերաւ հայ ժողովուրդին փրկութիւն, իրական ազատութիւն, խաղաղութիւն եւ ապահովութիւն» [24]: Փաստորեն՝ Ամերիկայի ռամկավարների պաշտոնաթերթը Հայաստանի խորհրդայնացման օրվա հարցում կիսում էր խորհրդային պաշտոնական տեսակետը: Նման մոտեցման հիմքում, մեր կարծիքով, դրված էր խորհրդային Հայաստանի վարչակարգի կողքին կանգնած լինելու ցուցադրության պատրաստակամությունը: Խորհրդահայ իշխանությունները որքան էլ մերժեին սկիզբութահայ քաղաքական կազմակերպություններին և նրանց մամուլի օրգաններին, ռամկավարները ճգնում էին ցույց տալ իրենց նվիրվածությունը խորհրդային վարչակարգին: Իսկ Հայաստանի խորհրդայնացման օրվա պատմագիտական ընկալումը նրանց չէր հետաքրքրում:

Հատկանշական է, որ Եգիպտոսի «Արև»-ը, կարևորելով Հայաստանի խորհրդայնացումը, նշում է որ մայիսի 28-ը նույն պես պետք է հիշարժան օր համարել [25]:

Ի դեպ, ռամկավարները ոչ միայն թերթերում էին խորհրդայնացման օրը համարում նոյեմբերի 29-ը, այլև այդ օրն էին նշում նաև խորհրդայնացման տարեդարձը [26]:

Սկիզբության համայնակարական թերթերը, քնականաբար, պետք է անվերապահուեն պաշտպանեին Հայաստանի խորհրդայնացման պատմության խորհրդային տեսակետը: Աթենքի «Արարատ» օրաթերթը գրում է . «...Սայիս 28էն ետք Նոյեմբեր 29 կայ ու մեր ժողովուրդը այսօր իր պետականութեան կը նայի այդ թուականին մէջ: Այսօրուան Հայաստանի տօնը Նոյեմբեր 29 է»: Կարծում ենք՝ թերթը, հետևելով իր դավանած գաղափարական ուղղությանը, իրավունք ունի պնդելու վերոնշյալը: Սակայն մեկնաբանություններում, մեր կարծիքով, փորձ է անում նվաստացնելու Սայիսի 28-ը: «Եթէ զաղութմները դեռ արժանաւորապէս չկրցան հասկնալ այդ թուականը, Սայիս 28ներու վրայ պնդելով չէ, որ մեր ժողովուրդը կը մօտեցնենք ներկայ իրականութեան, այլ ընդհակառակը, զայն աւելի կը հեռացնենք եւ խրամատը, որ կայ Հայաստանի եւ զաղութմներու միջեւ, աւելի կը խորացնենք», - ահա այսպես է հայտնում իր մտահոգությունը Աթենքի «Արարատ»-ը [27]: Կարծում ենք՝ թերթի բացասարությունները հիմնագուրկ են: Բոլորովին չի կարելի համեմատել հերոսամարտերի արդյունքում ծեռք թերված մայիս 28-ի անկախության հռչակումը և բոլշևիկյան Ռուսաստանի աջակցությամբ Հայաստան ներխուժած Հայեղկոմի որևէ իրավական հիմք չունեցող խորհրդայնացման մասին հռչակագիրը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Արենքի մեկ այլ համայնավարական թերթ «Մետան»-ն ավելի եռանդուն է պաշտպանում նոյեմբերի 29-ը: «Անկցի մեր հայրենիքի ստրկացման օր Մայիս 28ը, Կեցցէ մեր ազատութեան օր Նոյեմբեր 29ը», - գրում է թերթը [28]: Թերթը նոյն տարվա նոյեմբերի 29-ի համարում գրում է. «Կեցցէ հայ աշխատաւոր ժողովրդի իրական ազատութեան եւ անկախութեան բուականը, Նոյեմբեր 29ը, Կեցցէ խորհրդային Հայաստանը» [29]:

Այսահուվ՝ խորհրդային վարչակարգի քաղաքականությունը պաշտպանող թերթերը ոչ միայն կարևորել են նոյեմբերի 29-ի հրչակագիրը, անտեսել դեկտեմբերի 2-ի Դրո-Լեգրան համաձայնագիրը, այլև փորձել են նսեմացնել 1918թ. մայիսյան հաղթանակներն ու անկախ պետականության վերականգնման իրողությունը:

Թննելով սիյուռքահայ թերթերի մոտեցումները Հայաստանի խորհրդայնացման օրվա վերաբերյալ՝ կարելի է եզրակացնել.

ա) դաշնակցական թերթերը, առաջնորդվելով կուսակցության պաշտոնական տեսակետով, պնդում էին, որ Հայաստանի խորհրդայնացումը տեղի է ունեցել 1920թ. դեկտեմբերի 2-ին: Մեր կարծիքով՝ այս մոտեցումը ոչ միայն կուսակցության դիրքորոշման, այլև պատմական ճշմարտության պաշտպանություն է:

բ) հնչակյան թերթերը երկակի մոտեցում են ցուցաբերել. երբեմն պաշտպանել են խորհրդային պաշտոնական տեսակետը, երբեմն էլ փորձ է արվել շեղվելու այդ ուղուց և որդեգրել պատմական իրողությունը ոչ բոլշևիկյան պրիզմայով ներկայացնելու մարտավարությունը:

գ) ռամկավար-ազատական և համայնավարական թերթերը միակարծիք ներկայացրել են, որ Հայաստանի խորհրդայնացումը եղել է նոյեմբերի 29-ին, չի եղել որևէ հիշատակում դեկտեմբերի 2-ի մասին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), §. 113, գ. 1, գ. 1, թ. 1, 1 շրջ, 2:
2. Ղազախեցյան Վ., Հայաստան 1920-1940թթ., Եր., 2006, էջ 13:
3. Ղեկուների և հրամանների ժողովածու, Էջմիածին, Պետական հրատարակութիւն, 1921, ար. I, էջ 5:
4. Հայոց պատմություն, Հ. 4, գ. I: Նորագույն ժամանակաշրջան (1918-1945), Եր., 2010, էջ 283:
5. ՀԱԱ, §. 113, գ. 43, գ. 30, թ. 39 և հակ.:
6. Մեր կարծիքով, թերևս պատահական չէ նաև այն, որ պրոֆեսոր Զոն Կիրակոսյանի կազմած «Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության վաստավագրերում (1828-1923)» ժողովածուից «դուրս է մնացել» 1920թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը (Վստահաբար կոնունիստական կուսակցական գաղափարախոսական թելադրանքներով): (Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության վաստավագրերում (1828-1923) (պրոֆ. Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ), Եր., 1972, 810 էջ):
7. «Յառաջ», Փարիզ, 1932, 2 դեկտեմբեր:
8. «Ասպարէգ», Ֆրէզնօ, 1927, 27 մայիս:
9. «Յուսաբեր», Գահիրէ, 1929, 1 յունիսի:
10. «Արարատ», Պէյրութ, 1938, 11 յունուար:
11. «Արձագանք Փարիզի», Փարիզ, 1925, 31 մայիս:
12. Նոյն տեղում, 1924, 13 դեկտեմբեր:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀԾՈՅՑ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

- 13.«Սուրիական մամուլ», Հալէպ, 1923, 27 մայիս:
- 14.Նույն տեղում, 1924, 3 փետրուար:
- 15.Նույն տեղում, 28 հոկտեմբեր:
- 16.«Երկիր», Ստանպօլ, 1922, 29 մայիս:
- 17.«Երիտասարդ Հայաստան», Չիկագո, 1920, 22 դեկտեմբեր:
- 18.Նույն տեղում, 1921, 27 մայիս:
- 19.Նույն տեղում, 1925, 28 նոյեմբեր:
- 20.«Պայքար», Պոսթըն, 1927, 10 փետրուարի:
- 21.Նույն տեղում, 1927, 12 փետրուարի:
- 22.Նույն տեղում, 1926, 2 դեկտեմբերի:
- 23.Նույն տեղում, 1928, 29 նոյեմբերի:
- 24.Նույն տեղում, 1933, 29 նոյեմբերի:
- 25.«Արեւ», Աղէքսանդրիա, 1924, 28 մայիսի:
- 26.Ե. Զարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ),
Արշակ Չոպանյանի ֆոնդ, գ. 1, թ. 1, գ. 1815, թ. 1:
- 27.«Արարատ», Արէնք, 1925, 20 մայիսի:
- 28.«Անտառ», Արէնք, 1933, 25 մայիս:
- 29.Նույն տեղում, 29 նոյեմբեր:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի խորհրդայնացման օրվա հարցը սփյուռքահայ թերթերի
քննարկումներում (1920-1930-ական թթ.)
Խաչատուր Ստեփանյան

Հայաստանի խորհրդայնացման օրը տարբեր կերպ է ընկալվել և մեկնաբանվել սփյուռքահայ թերթերի կողմից: Իրականում քննարկումների, ավելի ճիշտ բախումների հիմքում ավելի շատ ընկած էր այս կամ այն քաղաքական ուժին համակրելու կամ մերժելու հարցը և ոչ պատմական իրողությունների վերլուծությունը: Այս համատեքստում երբեմն էլ քննարկումների տիրույթում է եղել Հայաստանի անկախ կարգավիճակի խնդիրը:

РЕЗЮМЕ

Вопрос дня советизации Армении в обсуждениях газет армянской диаспоры
(1920-1930-ые гг.)
Хачатур Степанян

Ключевые слова: Армения, советизация, диасpora, Армревком, национальные партии.

День советизации Армении воспринимался и комментировался газетами армянской диаспоры по-разному. В действительности, в основе дискуссии, точнее столкновения стоял вопрос симпатии или неприятия, а не анализ исторических событий. В этом контексте иногда обсуждалась проблема независимости Армении.

SUMMARY

The problem of the day of the sovietization of Armenia in the discussions of Armenian diaspora's newspapers (1920-1930s)
Khachatur Stepanyan

Key words: Armenia, sovietization, diaspora, Armrevcom, national parties.

The Diaspora newspapers had different perceptions regarding Armenia's becoming a socialist country. In fact the discussion, or more exact arguments, were based upon the issue of sympathy or ignorance towards particular political party rather than the analysis of historic facts. In this context even the issue of Armenia's being independent was sometimes discussed.